

PEARLS OF ARMENIAN HERITAGE

ՈՐԴԻՆԵՐ ԵՒ ԹՈՒՆԵՐ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ՍԲ. ՆԵՐՍԷՍ ՄԵԾ (+ 373-ԻՆ)

Ներսէս թռն էր Յուսիկ Կաթողիկոսին Աթանագինէս անուն որդիին եւ Բամբիշն անուն Արշակունի իշխանուիին: Հայ Եկեղեցոյ Չորրորդ դարու պատմութեան տիտանական դէմքերէն է եւ կը փայլի իր վարչական եւ կազմակերպչական հիմնական գործունէութեամբ՝ հաստատելու համար Նիկէական ուղղափառ վարդապետութիւնը, եւ քրիստոնէական շնորհքին պտղաբերութիւնը արդիւնատրող հիմնարկած կառոյցներով:

"Բիւզանդարան"ի գլխաւոր հերոսն է. եւ Մեծն Բարսեղ Կեսարիոյ հայրապետին վարքէն ներշնչուած դէպքեր շատ կը դժուարացնեն Ներսէսի կեանքին մասին պատմական ստոյգ թուականներ ունենալը: Իր գեղեցկութեամբ եւ պարթեական հասակով նախանձն էր հայոց արքունիքին: Հաւանաբար ընտրուած է 353-ին եւ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը ստանայ Կեսարիոյ մէջ՝ Բարսեղ Մեծն հայրապետէն:

Տիեզերական Եկեղեցոյ կեանքը յուզող ամէնէն շարժուն տարիներն եղած են Ներսէս հայրապետին հովութեան օրերը: Հազիւ վերադարձած Հայաստան՝ ան գումարեց Հայ Եկեղեցոյ պատմութեան մէջ արձանագրուած օրէնսդիր առաջին ժողովներէն մին՝ Աշտիշատի մէջ, որ այդ ժամանակներուն վարչական կեդրոնն էր Հայ Եկեղեցիին: Հայաստանի թագաւորութեան բոլոր նահանգներուն եւ ամէն գաւառներուն մէջ հիմնեց դպրոցներ, պատրաստելու համար յունարէն, ասորերէն, եւ պարսկերէն լեզուներու ընտիր մասնագէտ եկեղեցական թարգմանիչներ, որոնք ծիսական աղօթքները բերանացի թարգմանէին արարողութիւններուն



ընթացքին: Հիմնեց հիանդանոցներ կանոնաւոր խնամք տանելու համար տառապեալներուն: Հաստատեց աղքատախնամ կեդրոններ, կարիքաւորներուն արդարութեամբ բաշխելու համար նուիրատութիւնները: Բացաւ օթեաններ ապահով պատսպարաններ տալու համար ուղեւորներուն եւ ուխտաւորներուն առհասարակ: Արգիլեց յուսահատօրէն սգալ մեռեալները, յորդորելով միշտ յիշել Քրիստոսի յարութիւնը եւ անոր բերած մեծ շնորհքը:

Թիկունք կենալով հայ այն նախարարնրուն, որոնք կը դիմադրէին պարսիկներու Շապուհ թագաւորին արշաւանքներուն, Ներսէս 358-ին դեսպանութեան մը առաջնորդեց դէպի Կոստանդնուպոլիս եւ ապահովեց հռոմէական կայսրութեան զինակցութիւնը պարսիկներուն դէմ: Արթուն եւ պատրաստ հովին եղաւ մանաւանդ՝ դէմ դնելով ուղիղ հաւատքին թիր եւ սխալ քարոզութեան. պաշտպանեց հայ եկեղեցին արիոսամէտ հասկացողութիւններուն դէմ՝ նոյնիսկ եթէ ասոնց ջատագովներն էին իշխաններ եւ թագաւորներ. եւ ճիշդ այդ պատճառով Հայաստանի Պապ թագաւորը, որ 371-ին յաջորդած էր իր հօր Արշակի, թունաւորեց բարի եւ քաջ հովիւր: Ներսէսի մահը եղաւ 373-ին: Պապ թագաւոր անոր տեղ նշանակեց Իսահակ Մանազկերտցին, բայց Մեծն Բարսեղ, Կեսարիոյ հայրապետը, վերցուց Իսահակէ եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալու իշխանութիւնը, եւ Հայ Եկեղեցոյ եպիսկոպոսները չհաղորդակցեցան Իսահակի հետ: